# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի Պետական Համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետի Խորհրդի
28.09.2011թ. կայացած թիվ 1.11-12 նիստի
Նիստին ներկա էին Խորհրդի 40 անդամներից 28 -ը:

**Հաստատվեց հետևյալ օրակարգը՝**

1. Շնորհավորանքներ՝ տեսական ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր Բաբկեն Վաղարշակի Խաչատրյանի 75-ամյա հոբելյանի կապակցությամբ
2. ԵՊՀ Գիտխորհրդի ֆիզիկայի ֆակուլտետի ներկայացուցիչների առաջադրում
3. Առակա ուսուցմամբ ասպիրանտների թեմաների և ղեկավարների հաստատում
4. ԵՊՀ ուսանողների անվանական թոշակների համար թեկնածուների առաջադրում
5. Ընթացիկ հարցեր

**Առաջին հարցի** կապակցությամբ ելույթներ ունեցան Ռ. Ավագյանը, Ա. Դանագուլյանը, Ա. Կիրակոսյանը: Նրանք շնորհավորելով հոբելյարին, ներկայացրին նրան՝ որպես բարձր մակարդակի տեսաբանի, օրինակելի մարդու, որ նվիրված է իր գործին և ընկերներին, գիտնական դասախոսի և վերջապես որպես մեծ հայրենասերի:

**Օրակարգի երկրորդ հարցը** քննարկման ներկայցրեց ֆակուլտետի դեկան պրն Ռ. Ավագյանը:

**Որոշեցին** - ԵՊՀ Գիտական Խորհրդի կազմում ընդգրկելու համար առաջադրել է ակադեմիկոսներ Էդուարդ Վարդանի Չուբարյանի և Դավիթ Միհրի Սեդրակյանի թեկնածությունները:

**Առկա ուսուցման** առաջին տարվա ասպիրանտների թեմաների և ղեկավարների հաստատման հարցը ներկայացրեց խորհրդի քարտուղարը ըստ համապատասխան ամբիոնների ներկայացրած արձանագրությունների:

**Որոշեցին** - Հաստատել համապատասխան ամբիոնների որոշումներն ասպիրանտական թեմաների և ասպիրանտների գիտական ղեկավարների վերաբերյալ:

**Քննարկեցին** Ֆիզիկայի ֆակուլտետից անվանական կրթաթոշակների ներկայացվող ուսանողների թեկնածությունները:

**Ելույթ ունեցան** Ռ. Ավագյանը և Դ. Սեդրակյանը: Վերջինս առաջարկեց թեկնածությունները դիտարկել ըստ առաջադիմության:

**Որոշեցին** - Անվանական կրթաթոշակների ներկայացնել ներքոհիշյալ ուսանողներին.

*ԵՊՀ-ի կրթաթոշակ*

Հակոբյան Հակոբ Ռաֆիկի - 4-րդ կուրս

*Ալիխանյան եղբայրների անվան կրթաթոշակ*

Բաղդասարյան Նաիրի Հրահատի - 4-րդ կուրս

*Վ. Համբարձումյանի անվան կրթաթոշակ*

Հարությունյան Արուս Սլավիկի - 4-րդ կուրս

Մինասյան Արմինե Սպարտակի - 4-րդ կուրս

*Գ. Սահակյանի անվան կրթաթոշակ*

Ներսեսյան Հենրիկ Արտավազդի - 4-րդ կուրս

Ընթացիկ հարցերում քննարկվեցին

1) Ջեմմա Գալստյանի (ֆիզ-մաթ գիտ. թեկնածու) կազմած "Ռուս-անգլերեն-հայերեն ֆիզիկական բառարան" ձեռնարկը տպագրության երաշխավորելու (ներկայացրեց պրն Է. Չուբարյանը) և օպտիկայի ամբիոնի ներկայացրած, դոցենտներ Գ.Լ. Եսայանի, Լ.Խ. Մուրադյանի և կրտսեր գիտաշխատող Ա.Ս. Զեյթունյանի "Ոչ գծային-դիսպերսիոն սիմիլարիտոնների բնույթն, առանձնահատկություններն ու կիրառությունները" ուսումնական ձեռնարկը ԵՊՀ տպարանում հրատարակության երաշխավորելու հարցերը:

2) Ասպիրանտներ Իշխան Վարդանյանի, Հենրիխ Բաղրամյանի ատենախոսությունների մասնագիտացման շիֆրի փոփոխման և Վիգեն Ա. Աղչեգալյի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման հարցը

Որոշեցին - 1) Երաշխավորել Ջեմմա Գալստյանի կազմած "Ռուս-անգլերեն-հայերեն ֆիզիկական բառարան" ձեռնարկը հրատարակության՝ ԵՊՀ տպարանում:

Օպտիկայի ամբիոնի դոցենտներ Գ.Լ. Եսայանի, Լ.Խ. Մուրադյանի և կրտսեր գիտաշխատող Ա.Ս. Զեյթունյանի "Ոչ գծային-դիսպերսիոն սիմիլարիտոնների բնույթն, առանձնահատկություններն ու կիրառությունները" ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակության՝ հաշվի առնելով ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը:

2) Վերահաստատել՝ Ի.Վ. Վարդանյանի "Պորֆիրինների փոխազդեցությունը տՌՆԹ –ի հետ" թեմայով ատենախոսությունը /Գ.00.02 Կենսաֆիզիկա/ շիֆրով:

վերահաստատել՝ Հ.Մ. Բաղրամյանի Ա.04.07 /Կոնդենսացված վիճակի ֆիզիկա/ ատենախոսությունը Ա.04.10 /Կիսահաղորդիչների ֆիզիկա/ մասնագիտացմամբ:

վերահաստատել՝ Վիգեն Ազիզ Աղչեգալյի ատենախոսությունը "Կիսահաղորդ-չային նանոկառուցվածքներում էլեկտրոնային և խառնուկային վիճակների վրա փոխադարձ դիֆուզիայի ազդեցության ուսումնասիրում" անվանումով:

Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան Ռ. Մ. Ավագյան

Խորհրդի քարտուղար Ի.Գ. Հարությունյան